գործընթացի կազմակերպման» մասին կարգի 110-րդ կետի հետ կապված, ապա՝ Դատարանն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ ի հավաստում կամ ի հերքումն մատուցված ծառայությունները պայմանագրի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հանգամանքի, Կարգի 110-րդ կետով նախատեսված դրական կամ բացասական եզրակացություններից բացի, այլ ապացույցներ ներկայացնելու վերաբերյալ օրենսդրական որևէ արգելք առկա չէ:

Արդյունքում՝ Դատարանը փաստում է, որ հայցը բավարարելու և պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու համար առկա չեն բավարար հիմքեր:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերի բաշխման հարցը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 30,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ թիվ «ՀԿԱԾ-ԷԱՃԾՁԲ-25/1» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am